ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» մարտի 2012 թ. N-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի Հ.7270-Ա ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի Հ.1872-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Հավանություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի դեկտեմբերի 29-ի ««Լոգիկոն էքուիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված առաջարկին, պահանջի իրավունքի զիջման և բնակարանի ձեռք բերման պայմանագրի նախագծին հավանություն տալու մասին» հ.7270-Ա և 2012 թվականի փետրվարի 23-ի «Պայմանագիր կնքելու լիազորություն տալու մասին» հ.1872-Ա որոշումներին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի Հ.7270-Ա ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի Հ.1872-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետի 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.7270-Ա որոշմանը հավանություն տալու անհրաժեշտությունը հիմնավորվում է հետևյալով.

Հայաստանի Հանրապետության, ի դեմս Երևանի քաղաքապետ Երվանդ Զախարյանի, մի կողմից և «Հերմեկ» ՍՊ ընկերության միջև 2004թ. օգոստոսի 4-ին կնքվել է «Երևանի Գլխավոր պողոտայի հարակից օտարման գոտում հողամասը գնման նախապատվությամբ վարձակալության հանձնելու և կառուցապատման իրավունք տալու պայմանագիր կնքելու մասին» նախնական պայմանագիր, որի 4.1.8 կետով «Հերմեկ» ՍՊ ընկերությունը պարտավորվել է իր կողմից կառուցվող շենքերի վերգետնյա /զրոյական նիշից բարձր կառուցվող/ ընդհանուր մակերեսի յուրաքանչյուր մեկ քառակուսի մետր հաշվարկով Երևանի քաղաքապետարանի կողմից նշված հաշվարկային հաշվին փոխանցել 20 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, որպես օժանդակություն քաղաքի կառուցապատման ծրագրերին:

Հիշյալ պայմանագրի հիմքով Երևանի քաղաքապետարանին փոխանցման ենթակա գումարը կազմել է 154.000.000 դրամ, որի վճարման նպատակով կնքվել և Երևանի քաղաքացիական դատարանի 29.12.2008 թվականի թիվ ԵՔԴ/1116/02/08 վճռով հաստատվել է հաշտության համաձայնություն: Նշված վճռի հիման վրա տրված կատարողական թերթի հիմքով ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայությունում հարուցվել է կատարողական վարույթ: «Հերմեկ» ՍՊ ընկերությունը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 17.02.2010 թվականի վճռով ճանաչվել է սնանկ /անվճարունակ/:

Երևանի քաղաքապետարանը, որպես «Հերմեկ» ՍՊ ընկերության նկատմամբ 154.000.000 դրամի չափով պահանջի իրավունք ունեցող պարտատեր, ընդգրկվել է «Սնանկության մասին» Հայաստանի Հաննապետության օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետով բավարարման հերթի չապահովված պահանջով պարտատերերի ցուցակում:

«Լոգիկոն էքուիթի» ՍՊ ընկերությունը անվճարունակ ճանաչված «Հերմեկ» ՍՊ ընկերության կողմից Երևանի Արամի 82-84 հասցեում կառուցապատման ծրագրի ոչ պատշաճ իրականացման արդյունքում առաջացած պարտավորությունների կատարման նախաձեռնության շրջանակում առաջարկել է գնել Երևանի քաղաքապետարանի հանդեպ վերջինիս ունեցած կրեդիտորական պարտքը՝ 154.000.000 դրամի պահանջի իրավունքը զիջելու դիմաց Արամի փողոցի թիվ 82-84 հասցեում կառուցված բազմաբնակարան շենքի 13-րդ հարկում գտնվող 131.0քմ բնակելի մակերեսով բնակարանի հատուցմամաբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սնանկության վարույթի շրջանակներում 154.000.000 դրամ գումարի ստացումն իրատեսական չէ, «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետի ուժով այն հանդիսանում է բավարարման հերթի չապահոված դրամական պահանջ, իսկ առաջարկված ցեսիայի պայմանագրի արդյունքում Երևան համայնքը, որպես սեփականություն ձեռք է բերում անշարժ գույք /բնակարան/, Երևանի քաղաքապետի 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 7270-Ա որոշմամբ հավանություն է տրվել «Հերմեկ» ՍՊ ընկերության 154.200.000 կրեդիտորական պարտքը Երևան համայնքից գնելու և պահանջի իրավունքի զիջման դիմաց Արամի փողոցի հ.82-84 հասցեի շենքի կառուցապատումից առաջացած շենքի 13-րդ հարկում գտնվող 131.0քմ մակերես ունեցող բնակարանով հատուցելու առաջարկին:

«Լոգիկոն էքուիթի» ՍՊ ընկերության առաջարկի ընդունման արդյունքում Երևան համայնքի իրավունքների խախտում և լրացուցիչ պարտականությունների առաջացում տեղի չի ունենալու:

Երևանի քաղաքապետի 2012 թվականի փետրվարի 23-ի հ.1872-Ա որոշմանը հավանություն տալու անհրաժեշտությունը հիմնավորվում է հետևյալով.

Հայաստանի Հանրապետության, ի դեմս Երևանի քաղաքապետի, և «Գրադինվեստ» ՍՊ ընկերության միջև 09.06.2005 թվականին կնքվել է «Երևանի Եկմալյան 1-ին փողոցին հարող տարածքի կառուցապատման իրավունքի առուվաճառքի պայմանագրի կնքման իրավունքի ձեռքբերման մասին» նախնական պայմանագիր: Նշված պայմանագրի 4.5 կետով «Գրադինվեստ» ՍՊ ընկերությունը պարտավորվել է կառուցվող շենքերի վերգետնյա /զրոյական նիշից բարձր կառուցվող/ ընդհանուր մակերեսի յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի հաշվարկով Երևանի քաղաքապետարանի հաշվարկային հաշվին փոխանցել 21.000 դրամ: «Գրադինվեստ» ՍՊ ընկերության կողմից կառուցապատվել է 6310քմ մակերես, որի համար Երևանի քաղաքապետարանին փոխանցման գումարը 28.06.2010 թվականի դրությամբ կազմել է 128.730.000 դրամ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.07.2011թ. թիվ ԵԿԴ/1329/02/10 վճռով Երևանի քաղաքապետարանի հայցը բավարարվել է և վճռվել է պատասխանող «Գրադինվեստ» ՍՊ ընկերությունից հօգուտ Երևան համայնքի բռնագանձել 128.730.000 ՀՀ դրամ՝ որպես քաղաքային ծրագրերի օժանդակության համար չվճարված գումար:

Հայաստանի Հանրապետության, ի դեմս Երևանի քաղաքապետի և «Գապբնակշին» ՍՊ ընկերության միջև 21.07.2004թ. կնքվել է «Երևանի Գլխավոր պողոտայի հարակից օտարման գոտում հողամասի կառուցապատման իրավունքի առուվաճառքի պայմանագրի իրավունքի ձեռքբերման մասին» պայմանագիր: Նշված պայմանագրի 4.5 կետով «Գապբնակշին» ՍՊ ընկերությունը պարտավորվել է իր կողմից

ստեղծված գույքի՝ կառուցվող շենքերի վերգետնյա /զրոյական նիշից բարձր կառուցվող/ ընդհանուր մակերեսի յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի հաշվարկով Երևանի քաղաքապետարանի հաշվարկային հաշվին փոխանցել 20 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես օժանդակություն քաղաքի կառուցապատման ծրագրերին:

«Գապբնակշին» ՍՊԸ-ի կողմից 00 նիշից վերև կառուցվել է 27.540քմ մակերես, որի համար Երևանի քաղաքապետարանի հաշվարկային հաշվին պետք է փոխանցվեր 201.042.000 ՀՀ դրամ, որից վճարել է ընդամենը 11.000.000 դրամ: 134.000.000 դրամ բռնագանձելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի պահանջը բավարարվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայքների ընդհանուր իրավասության դատարանի 18.08.2009թ. թիվ ԵՔԴ/0917/02/08 վճռով, իսկ 56.042.000 դրամ բռնագանձելու պահանջը բավարարվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.06.2011թ. թիվ ԵԿԴ/2258/02/10 վճռով:

«Գապբնակշին» և «Գրադինվեստ» ՍՊ ընկերությունների կողմից 2004-2005թթ. ընթացքում գերակա հանրային շահ ճանաչված տարածքների ձեռքբերման և իրացման գործընթացի ժամանակ առաջ են եկել Հայաստանի Հանրապետության անունից ստանձնած, սակայն չկատարված պարտավորություններ և այլ խախտումներ, որոնց արդյունքում առաջացել են բազմաթիվ բողոքներ և դժգոհություններ: Խնդրի հնարավոր լուծման նպատակով Երևանի քաղաքապետը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ Երևանի քաղաքապետարանին ուղղված Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարի 20.01.2012թ. թիվ 02/13.8/567-12 գրությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ քննարկվող դրամական միջոցների ստացման հիմք հանդիսացող պայմանագրերը կնքվել են Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկած «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կողմից, առաջարկել է վերը նշված դատական ակտերի հիմքով Երևանի քաղաքապետարանի բյուջե գանձման ենթակա ընդհանուր 318.772.000 դրամ գումարի պահանջի իրավունքը զիջել Հայաստանի Հանրապետությանը՝ վերջինիս ներկայացուցչի հետ կնքելով համապատասխան պայմանագիր:

Ելնելով անհրաժեշտությունից՝ առաջարկվում է ընդունել սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի Հ.7270-Ա ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի Հ.1872-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի քաղաքապետի 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.7270-Ա և 2012 թվականի դեկտեմբերի 23-ի հ.1872-Ա որոշումներին հավանություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի Հ.7270-Ա ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի Հ.1872-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևանի քաղաքապետի 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.7270-Ա և 2012 թվականի փետրվարի 23-ի հ.1872-Ա որոշումներին հավանություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ